

ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ
(2005-2017)

Համայնքապետ՝ վերապատուելի Յարութին Սելիմեան

Սուրիոյ Հայ Աւետարանական համայնքը ի սկզբանէ, հոգեւոր-մշակութային ու ազգային- հայապահպանական իր գործունէութեամբ մնայուն ու ակնառու ներկայութիւն եղած է գաղութիս կեանքէն ներս: Այդ դերը առաւել ընդգծուած ու նշանակալի դարձած է յատկապէս 1990-ականներէն ի վեր՝ երբ իր յարաճուն լայնածաւալ գործունէութեամբ համայնքը դարձած է ազգային կեանքի ընդհանուր համակարգին կարեւոր ու ինքզինք պարտադրող մէկ լծակը:

Համայնքը իր մէջ կը ներառնէ Հալէպը, Դամասկոսն ու Քեսապը, իբրեւ վերին ղեկավար ու պատասխանատու մարմիններ ունենալով Միջին Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան Կեդրոնական Մարմինը, որ նաեւ նիւթական օժանդակութեան հաստատուն աղբիւր է, Հայ Աւետարանական Եկեղեցիներու Համայնքային Գործադիր Մարմինը, Հայ Աւետարանական Եկեղեցիներու Կրթական Խորհուրդը եւ այլ ենթակայ մարմիններ: Նշուած մարմինները կը հսկեն ու կը կազմակերպեն համայնքներու ո՛չ միայն հոգեւոր-կրօնական, այլ նաեւ ուսումնակրթական ու մշակութային գործունէութիւնը:

Սոյն տեղեկագիրը նպատակ ունի ընդհանուր ակնարկով մը անդրադառնալ համայնքէն ներս տարուած բազմաբնոյթ ու բազմատեսակ գործունէութեանց, իբրեւ ժամանակաշրջան առնելով 2005 -2017 թուականները, յատկապէս կարեւորելով ու ծանրանալով Սուրիոյ մէջ սկսած պատերազմի վեց տարիներուն համայնքային իշխանութիւններուն տարած աշխատանքին՝ ի բարօրութիւն ու ապահովութիւն վտանգի գօտիին մէջ յայտնուած ժողովուրդին:

Ինչ կը մնայ ապագայ գործունէութեանց ծրագրաւորումին՝ հոս յատուկ անդրադարձ պիտի չունենայ, քանի որ ան, անտարակոյս, արդէն խաղաղ օրերու մէջ ու առաւել նպաստաւոր պայմաններու տակ՝ առաւել կատարեալ շարունակութիւնը պիտի ըլլայ նախորդող տարիներու ընթացքին անհնարաբար դարձած ու ծաւալած գործունէութեան՝ նպատակ ունենալով համայնքի անդամներու տակաւին առկայ կարիքները հոգալ, կարեւոր շինարարական կամ վերանորոգութեան աշխատանքներ տանիլ՝ միշտ իբրեւ գերագոյն տեսլական ունենալով համայնքին քրիստոնէավայել ու հայադրոշմ դէմքը հնարաւորինս պահպանելն ու զարգացնելը:

Համայնքին մեջ տարուող աշխատանքները անընդհատ գործընթացք են, սակայն, նկատի առնելով, որ ծագած պատերազմին հետ կեանքի բնականոն հոլովոյթին կտրուկ փոփոխութիւնը իրեն հետ բերաւ նոր ռազմավարութեան պահանջը՝ 2005-2017-ի ժամանակամիջոցին Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքին գործունէութիւնը պայմանականօրէն կը բաժնենք երկու շրջանի՝
2005- 2010 - նախապատերազմական շրջան,
2011 - 2017 - պատերազմական շրջան:

Կազմաւորուելով Սուրիա հաստատուած տարագիր հայութեան առաջին իսկ ոգորումներու շրջանին՝ 1923-էն ի վեր Հայ Աւետարանական համայնքը հաւատարիմ մնաց իր նախորդներու դաւանած հիմնական սկզբունքներուն՝ համայնքի զուակները քրիստոնէական ճշմարիտ հաւատքի լոյսին մեջ պահել, ազգին տալ համաշխարհային գիտական յառաջընթացքին հետ քայլ պահելու ունակ՝ գիտութեամբ զինուած, քաղաքակիրթ, նոյն ատեն հայեցի ու քրիստոնէական դաստիարակութեամբ կերտուած սերունդներ:

Եթէ անցած տարիներու պատմութիւնը հոգեւոր, կրթամշակութային արանդական դարձած աշխատանք է, միշտ «հաւատարիմ հիմնադիր հայրերու կտակին», այն է՝ «Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցի կազմուիլ եւ ո՛չ ուրիշ բան», ապա վերջին աւելի քան քսանամեայ շրջանը նոր բարձունքներ գրաւելու, անդադար վերելքի անխոնջ ջանք ու գաղութային իրականութեան բոլոր ասպարէզներուն մեջ իր արդար տեղը հաստատելու կամքի դրսեւորում է:

Նախապատերազմական շրջանի գործունէութիւն
(2005-2010)

Ա. Քրիստոնէական դաստիարակութեան ոլորտ-

2002-ին, վերապատուելի Յարութիւն Սելիմեանի հովուական շրջանին բացուած Քրիստոնէական Դաստիարակութեան Կեդրոնը եղաւ ու մինչեւ օրս ալ կը շարունակէ մնալ այն հոգեշնորհ վայրը, ուր կը տարուի քրիստոնէական դաստիարակութեան բազմաբնոյթ աշխատանք, կը լսուի, կը մեկնաբանուի ու կը սերտուի Աւետարանին Խօսքը: Հոն կը կատարուին Կիրակնօրեայ դպրոցի ու Ք. Ջ. Երիտասարդաց պաշտամունքներ, Աստուածաշունչի սերտողութիւններ, կիրակնօրեայ դպրոցներու ուսուցիչներ ու առաջնորդներ պատրաստելու դասընթացք, Աստուածաշունչի դասընթացքներ,

նաեւ երիտասարդ գոյգերու հոգեմտաւոր կրթութեան համար դասախօսութիւններ եւ այլ ձեռնարկներ:

Կիրակնօրեայ դպրոցը Հայ Աւետարանական Բեթէլ եկեղեցւոյ կարեւոր բաղադրիչներէն է: Անոր անդամ մանուկները ամէն կիրակի առաւօտեան Կեդրոնին մէջ կ'ունենան պաշտամունք: «Պատանի ասպետներ»-ը նոյնպէս հոն պաշտամունք ու առաջնորդ պատրաստելու դասընթացք կ'ունենան, որ կը վարէ եկեղեցւոյ հովիւը:

2002-էն ի վեր, Բեթէլ եկեղեցիին կից, փոքրիկներու համար կը գործէ նաեւ Ամառնային Սուրբ Գրոց վարժարանը, ուր առաւել հաճելի ձեւով անոնց կը մատուցուին հոգեւոր նիւթեր, ազգային ու հոգւոր երգեր, հայոց պատմութիւն, անգլերէն, համակարգչային գիտելիքներ, նաեւ՝ կ'ունենան մարզանք, խաղեր, պտոյտներ, ձեռային աշխատանքի ուսուցում: Դասընթացքի արարտին սաները իրենց ստացած գիտելիքներն ու ունակութիւնները կը ցուցադրեն յատուկ կազմակերպուած հանդեսի միջոցին:

Բ. Ուսումնակրթական ոլորտ

Հայ Աւետարանական համայնքի Կրթական Խորհուրդի մշտական ուշադրութեան ներքոյ է կրթական գործը, իր ենթակայութեան տակ գտնուող դպրոցներու եւ ուսումնակրթական, եւ շէնքային խնդիրներու կարգաւորումը: 2003-ին կը հրատարակուի պետական հրամանագիր, ըստ որուն Սուրիոյ տարածքին գործող բոլոր նախակրթարանները վեց կարգի փոխարէն կ'անցնին պարտադիր իննամեայ դրութեան: Նշեալ հնգամեակին Ուսումնական Խորհուրդը անյապաղ կ'որոշէ օգտուիլ այս կարգադրութեան ընձեռնած հնարաւորութենէն՝ ի նպաստ հայեցի ու քրիստոնէական դաստիարակութեան, որ հայ դպրոցին կարեւորագոյն առաքելութիւնն է: Նկատի առնելով, որ հայ աշակերտութեան թուաքանակը թոյլ կու տար այս ծրագիրը իրագործել Բեթէլ վարժարանին մէջ՝ Ուսումնական Խորհուրդին ջանքերը կ'ուղղուին այդ կողմ, որուն շնորհիւ 2003-2004 ուս. տարեշրջանի շրջանաւարտները այնուհետեւ իրենց ուսումը պիտի շարունակէին հարազատ կրթօջախին մէջ:

Սոյն ազգապահպան նպատակը իրագործելու ճանապարհին, դպրոցաշէնքները բարեզարդելու եւ կրթական գործը բարձր մակարդակի հասցնելու ի խնդիր, նիւթական օժանդակութիւն կը յատկացնեն Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութիւնը եւ Bible Lands-ը:

Համայնքի բոլոր զաւակները ներառնելը եւ հայ աշակերտութեան թուաքանակը բարձրացնելը կը մնար հրամայական պահանջք: Այդ ուղղութեամբ կատարուած միջոցառումներէն կարեւոր է նշել նաեւ դպրոցի տարեսկիզբի

ծանուցումը, ուր այլ առաւելութիւններու կարգին կը նշուի, որ 2006-2007 ուսումնական տարուան համար «բողբոջ» կարգ ընդունուող մանուկները պիտի ստանան 100%, իսկ մանկապարտեզի ու դպրոցի մնացեալ կարգերու աշակերտները՝ 50% կրթանպաստ:

Տարուած ջանքերը կը պսակուին հրաշալի արդիւնքով, երբ պրովէի պետական քննութիւններուն Բեթէլի աշակերտութիւնը կ'ապահովէ փայլուն յաջողութիւն:

Այս արդիւնքէն քաջալերուած ու առաւել բարձր դիրքի հասնելու ձգտումով՝ Ուսումնական Խորհուրդը կը կատարէ երկրորդականի անցնելու առաջին քայլը՝ տասներորդ դասարանը կը յայտարարուի բացուած: Իսկ 2009-ի հոկտեմբերին բացումը կը կատարուի դպրոցաշէնքի նորակառոյց երրորդ յարկին, որ նոյն ատեն դպրոցի ամբողջական երկրորդական դառնալուն աւետումն էր: Շնորհիւ Կրթական Խորհուրդին եւ համայնքապետ վերապատուելի Յարութիւն Սելիմեանի ջանքերուն՝ Բեթէլ վարժարանը կը դառնար Սուրիոյ Հայ Աւետարանական համայնքի միակ երկրորդական վարժարանը, որ իր ամենամեայ ձեռք ձգած փայլուն արդիւնքներով մինչեւ օրս Հալէպի հայկական ճեմարաններու մէջ առաջնութեան պատուաւոր դիրքերը կը կիսէ:

Մշակութային ոլորտ

Հալէպի հայ աւետարանական համայնքը միշտ ալ մշակութային եռանդուն գործունէութիւն ծաւալած է, զայն նկատելով իբրեւ հայապահպանութեան հիմնական ազդակներէն մին՝ նոր սերունդին մէջ գեղարուեստական ճաշակ սերմանելու, զանոնք ազգային մշակոյթի հոգեկերտիչ ոլորտին մէջ պահելու, նոյն ատեն մարդակերտումին մէջ արուեստի բացառիկ կարելոր դերը նկատի առնելով:

Այս տեսլականով առաջնորդուած ալ 80-ականներէն ի վեր, Բեթէլ եկեղեցւոյ հովանաւորութեամբ, կը գործէ «Երախտիք» երգչախումբը՝ իր մանկապատանեկան ու չափահասներու խումբերով, ղեկավարութեամբ՝ տիկ. Շողակաթ Աբարդեան-Սելիմեանին: Երգչախումբը յաճախակի կ'ունենայ սրբազան հոգեւոր, ազգային, դասական յայտագիրներով համերգներ, ինչպէս նաեւ մաս կը կազմէ դպրոցական ամավերջի հանդէսներու յայտագիրին կամ հոգեւոր երգերու կատարողութեամբ հանդէս կու գայ եկեղեցւոյ մէջ:

Երգչախումբին գործունէութիւնը մեծապէս ամբողջացուց ու կարելոր բաց մը լեցուց 2006-ին բացուած «Արմիս» երաժշտանոցը: Հաստատութեան հինգ բաժիններուն մէջ՝ սոլֆեժ, ջութակ, սրինգ (ֆլիւթ), կիթառ, դաշնամուր, կը դասաւանդեն որակեալ երաժիշտներ՝ իբրեւ տնօրէն ու երաժշտական ղեկավար

ունենալով երաժիշտ-ստեղծագործող տիկ. Շողակաթ Աբարդեան-Սելիմեանը:

Տեղական ուժերով համերգներէն զատ, յաճախակի նաեւ հայրենիքէն խումբեր հրաւիրուած ու համերգով հանդէս եկած են Հալէպ:

Աշակերտները ինքնուրոյն ընթերցումի մղելու եւ զանոնք հայեցի ոգիով դաստիարակելու ի խնդիր, 2006-ին Շիրաճեան սրահին մէջ կը բացուի նաեւ գրադարան- ընթերցարանը:

Պատերազմական շրջանի գործունէութիւն (2011-2017)

Ինչպէս նշած էինք՝ նախապատերազմական շրջանի գործունէութեանց քանի մը ոլորտներու միայն արագ ուրուագիծեր տալով կ'անցնինք պատերազմական շրջանին Սուրիոյ հայ աւետարանական համայնքին մէջ իրագործուած հսկայական աշխատանքին, գոր մէկ յօդուածով ամփոփելը դժուար գործ է:

Զափազանց լայն ընդգրկում ունեցող այս գործունէութեան ամենէն հիմնական քանի մը բնագաւառներու միայն պիտի անդրադառնաք՝ զանոնք տեղադրելով հետեւեալ ենթավերնագիրներուն տակ՝

- Ա.- Ընկերային ծառայութիւն,
- Բ.- Կրթական եւ քրիստոնէական դաստիարակութիւն,
- Գ.- Յարաբերութիւններ սուրիական պետական շրջանակներու հետ,
- Դ.- Յարաբերութիւններ Հայրենիքին հետ
- Ե.- Միջհամայնքային եւ քոյր եկեղեցիներու հետ յարաբերութիւններ:

Ա.- Ընկերային ծառայութիւն

2011-ի գարնան Սուրիոյ մէջ բռնկած ահաբեկչական գործողութիւնները կարճ ժամանակի մէջ վերածուեցան լայնատարած պատերազմի, ետեւ ետեւի ընդգրկեցին երկրին գաւառները՝ բնակչութիւնը ձգելով պետական հսկողութեան շրջանակէն դուրս: 2012-ին Հալէպը եւս ինկաւ պաշարումի օղակին մէջ, կտրուեցան կամ շատ անկանոն դարձան արտաքին աշխարհին ու այլ նահանգներու հետ հաղորդակցութիւնը, որ ծնունդ տուաւ տնտեսական, ընկերային, կենցաղային այլեւայլ խնդիրներու: Հալէպի հայաշատ կարգ մը թաղամասեր

յայտնուեցան ահաբեկիչներու կողմէ գրաւուած տարածքներուն մէջ կամ եղան ճակատային դիրքերու վրայ՝ թշնամիին կողմէ մշտական հրթիռակոծութեան թիրախ: Խուճապահար բնակչութեան մէկ մասը գաղթեց, մէկ մասը անցաւ ծովափնեայ ապահով վայրեր: Հայերը եւս գաղթեցին Հայաստան, Լիբանան կամ այլ անցան ծովեր ու ովկիանոս: Մնացող շատ ընտանիքներ, հրթիռակոծումի հետեւանքով բնակարանէ զրկուելով կամ վտանգէ խուսափելու նպատակով, այլ թաղամասեր կամ համայնքներու պատկանող շէնքերու մէջ ապաստանեցան: Գաղութին թուաքանակը մեծապէս նուազեցաւ, որ նոյնպէս ազդեց կեանքի բնականոն հոլովոյթին վրայ: Նման պայմաններու մէջ, յատկապէս գաղութը պահպանելու ի խնդիր, հրամայական պահանջք էր անյապաղ կազմակերպել գաղութին մէջ տակաւին մնացող հայութեան կեանքը հնարաւոր չափով ապահովելու գործը, գէթ հոգալով պատերազմի հետեւանքով ծագած տնտեսական ու կենցաղային կարիքները:

Հայ Աւետարանական Եկեղեցին չէր կրնար անտարբեր դիտող ըլլալ, ընդհակառակը, շատ արագ կազմակերպուեցաւ ու ստեղծեց ժողովուրդի կարիքները հոգալու մարմիններ, պատրաստ ըլլալով ե՛ւ միւս համայնքներու հետ գործակցաբար ե՛ւ կամ ինքնուրոյնաբար դիմագրաւել դժուարութիւնները ու բոլոր անակնկալները, որ կրնային մատուցել պատերազմական օրերը:

Ընկերային յանձնախումբը իր բոլոր անդամներով, անմիջական հսկողութեան տակ համայնքապետ վերապատուելի Յարութիւն Սելիմեանի, ի բարօրութիւն ժողովուրդի հսկայածաւալ գործ կատարեց, զոր ամէնէն համառօտ ու խտացուած ձեւի մէջ պիտի փորձենք ներկայացնել՝ զանոնք զետեղելով կարգ մը կէտերու տակ՝

Հայ Աւետարանական Եկեղեցւոյ հովանաւորութիւնը վայելեցին ու պատերազմական բոլոր տարիներուն նպաստ ստացան համայնքին պատկանող կամ այլ համայնքներու զուակ աւելի քան 300 ընտանիքներ՝ առանց խտրութեան: Այդ նպաստները բազմազան էին, ինչպէս՝

ա) Սննդեղէն.- Տրուած ըլլալով, որ Հալէպի շրջափակումի առաջին տարին սննդեղէնի սուր տագնապ ստեղծուեցաւ, ու ժողովուրդը մատնուեցաւ տագնապի՝ ընկերային ծառայութեան մարմինը կարիքաւորներուն շտապ կերպով սննդեղէնով ապահովելու առաջին քայլը նախաձեռնեց: Այս առաջին քայլը հետագային կանոնաւորուեաւ, դարձաւ պարբերական ու բաշխումը ստացաւ ենթավերնագիրներ, ինչպէս՝ առաջին անհրաժեշտութեան սննդեղէն ընտանիքներու, կաթի բաշխում մանուկներ ունեցող ընտանիքներու, կտրօն՝ որոշակի հանրախանութ ռուզած սննդեղէնը գնելու եւ այլն:

Այս իմաստով յուզիչ ու գեղեցիկ վարմունք էր ամեն ս. Օննդեան, ս.Յարութեան կամ Ամանորի տօնական առիթներով ժողովուրդին յաւելեալ սննդեղէն ու այլ նուէրներ բաշխելը, յատկապէս այնպիսի սննդեղէն, առանց որոնց հայ ընտանիք մը չի պատկերացներ իր այդ տօներու սեղանները: Նպատակն էր ո՛չ միայն նիւթեղէն սնունդ հայթայթել, այլև մարդոց տրամադրութիւնը բարձրացնել ու զգացնել, որ համայնքային ղեկավարութեան մշտական հոգածութեան տակ են:

Այս առիթներով ու մնացեալ բոլոր նպաստաբաշխումները առաւել ընդունելի կը դառնան արժանապատիւ մարդոց, երբ հոն ներկայ կ'ըլլայ Համայնքապետը՝ իր ջերմ ու անմիջական ժպիտով ու բարեմաղթանքներով: Ամէն բան կը կատարուի մշակուած ու կանոնաւոր, քաղաքակիրթ ձեւով, զգոյշ՝ չվիրաւորելու մարդոց արժանապատուութիւնը:

բ) Դրամական նպաստ.-

Դրամական նպաստը բաշխուեցաւ գլխաւորաբար հետեւեալ անուանումներու տակ՝

1. Տարուան մէջ 4-5 անգամ համալսարանականներու՝ իբրեւ կրթանպաստ,
2. դպրոցականներու կրթանպաստ,
3. 2013-էն սկսեալ ամսական դրութեամբ դրամական նպաստ՝ կարիքաւորներու,
4. անապաստարան ընտանիքներու տունի վարձքի,
5. ելեքորականութեան եւ վառելիքի վճարումի,
6. ուսուցիչներու՝ ծանր պայմաններու տակ իրենց պարտականութեան մէջ չթերանալու իբրեւ քաջալերանք,
7. այրիներու օժանդակութիւն եւ այլն:

գ) Ջրաբաշխում.- Գաղտնիք չէ, որ Հալեպի պաշարումին ամմէնէն աղետալի երեւոյթներէն մին, հրթիռակոծումէն ետք, ջուրի սակաւութիւնը կամ ալ յաճախակի երկարաժամկետ չզոյութիւիւնն էր: Ամէն մարդ չէ որ ֆիզիքական կարողութիւնը ունէր թաղերու մէջ փորուած հորերէն կամ շրջող ջրաբաշխ մեքենաներէն ջուրը տուն հասցնել: Այս պայմաններուն տակ համայնքը եւս ունեցաւ շրջիկ մեքենայ, որ եկեղեցւոյ հորէն ջուր կը մատակարարէր կարիքաւորներու: Կը մատակարարուէր նաեւ շիշերով ըմպելի ջուր, իսկ փափաքողները կը ստանային նաեւ ջուր ամբարելու տակառներ:

դ) Կենցաղային այլազան պէտքեր.- Յարաճուն սղութեան պատճառած դժուարութիւնները ամբառնալու նպատակով ստեպ կը բաշխուէր նաեւ մաքրութեան անհրաժեշտ օճառեղէն կամ քիմիական նիւթեր ու այլ պարագաներ: Իսկ պաղէն փրկելու

նպաստը կ'արտայայտուեր ո՛չ միայն վառելիքի նիւթական օգնութեամբ, այլ նաեւ տրամադրելով մեծերու եւ մանուկներու ձմեռնային տաք հագուստեղէն ու անկողնային պարագաներ (բարձ, ծածկոց եւ այլն):

Կ'ըսուի, թէ դժուարութիւններն ու նեղ պայմանները հնարամիտ կը դարձնեն: Որպէսզի այրիներ կամ միայնակ կանայք ունենան սեփական աշխատանքով դրամ շահած ըլլալու գոհունակութիւնը՝ ընկերային ծառայութիւնը այդ հնարամիտ քայլին կը դիմէ՝ անոնց տրամադրելով բուրդէ թելեր ու անոնց հիւսածի համար վճարելով:

ե) Անտարակոյս ուշադրութեան կեդրոն են յատկապէս մանուկները ու ծերերը: Պատերազմի հետեւանքով սերունդ մը զրկուեցաւ անհոգ ու ուրախ մանկութենէ, ապրեցաւ ցուրտի ու խաւարի, մահուան սարսափի ու այլ զրկանքներու մէջ: Այս մեծ չարիքը մեղմելու նպատակով մանուկները յաճախ կը հաւաքեն, անոնց համար կը կազմակերպեն գուարճալի ժամանց՝ խաղեր, երգ ու պար, նաեւ անոնք կը ստանան իրենց սիրելի ուտելիքներ ու նուէրներ: Իսկ տարեցներու նիւթական օգնութեան հետ նաեւ կը բաշխուին դեղեր, կ'ապահովեն ակնոցով. յաճախակի են նաեւ Ազգային Ծերանոց այցերը:

Ընկերային ծառայութեան ամէնէն անակնկալ ու աննախընթաց գործողութիւններն էին նոյնիսկ պատերազմական ծանր պայմաններու տակ քաղաքս բաղդատաբար մաքուր պահող բոլոր աղբահաւաքները նաեւ ելեքտրական ընկերութեան ծառայողները (աւելի քան 100-ական անձ) տարբեր օրերու հրաւիրելն ու զանոնք պատուելը համեղ կերակուրներով, առաւել՝ ուրախացնելը նիւթական օժանդակութեամբ ու հաճելիօրէն զարմացնելը:

զ) 2013-ին գործելու կը սկսի նորաբաց «Բեթել Բուժ. Կեդրոն»-ը, ուր անվճար բուժում կրնայ ստանալ քաղաքի ոեւէ բնակիչ՝ անկախ ազգութենէ ու կրօնքէ:

Բ. Կրթական ու քրիստոնէական դաստիարակութիւն

Գաղթերու հետեւանքով գաղութի բնակչութեան թուաքանակին նուազումին հետ կը պակսէր նաեւ հայ աշակերտութեան թիւը: Միւս կողմէն կարգ մը դպրոցներ կը գտնուէին վտանգաւոր շրջաններու մէջ, հետեւաբար հարկադրուեցան այլ շրջան տեղափոխուիլ ու առաւել աննպաստ պայմաններու մէջ շարունակել դպրոցական դասաւանդութիւնը:

Բեթել վարժարանը եւս իր աշակերտութեան առջեւ բաց պահեց իր դռները ամբողջ պատերազմի ընթացքին՝ հակառակ խիստ վտանգաւոր պայմաններուն: Հրթիռներ ինկան եւ՛ ըսկը, եւ՛ դպրոցի մասնաշէնքերուն վրայ, սակայն, ինչպէս քաղաքի

մնացեալ հայկական դպրոցները, նոյնպէս Բեթէլը չընկրկեցաւ, այդպիսով առաւել արիութիւն ներարկելով ծնողներուն՝ որ չդադրեցնեն իրենց զաւակներուն ուսումնառութիւնը: Սակաւ օրեր, պետական որոշումի հիման վրայ, քաղաքին մեջ չեղան դասաւանդութիւններ, իսկ մնացեալ պարագաներուն հերոսական էր ե՛ւ աշակերտութեան, ե՛ւ ուսուցչական ու վարչական կազմերուն պահուածքը: Այդ միասնական նուիրումին ու ջանքերուն շնորհիւ, դժուարագոյն պայմաններու մեջ, Բեթէլի աշակերտութիւնը յաջողեցաւ միշտ առաջին կարգեր նուաճել թէ՛ պրովէի եւ թէ՛ պաքալոքիայի պետական քննութիւններուն:

Չդադրեցաւ նաեւ «Արմիս» երաժշտական դպրոցին դասաւանդութիւնը, ռումբերու եւ հրթիռներու ձայներուն տակ աշակերտ ու ուսուցիչ գիտութեան ու արուեստի միջոցով իւրօրինակ պայքար մղեցին չարիքին դէմ:

Պատերազմի հետեւանքով բնակարան փոխած կարգ մը ընտանիքներ իրենց դուստրերը դրած էին աւելի մօտ գտնուող «Հալէպի գոլէճ»-ին աղջկանց բաժինը, ուր անոնք զրկուած էին մայրենի լեզուի դասերէն: Կարելոր ու գեղեցիկ իրագործումներէն է նաեւ, որ շնորհիւ վերապատուելի Սելիմեանի տարած ջանքերուն՝ Հալէպի գոլէճի աղջկանց բաժին հայերէնի դասաւանդութիւն կը մտնէ, որ դադարած էր 60-ականներուն:

Չդադրեցաւ նաեւ հոգեւոր կեանքը, իրենց գործունէութիւնը շարունակեցին Կիրակնօրեայ դպրոցները, դօղանջեցին եկեղեցիներու զանգերը, խաղաղ օրերէն աւելի մեծ բազմութեամբ լեցունեցան եկեղեցիները: Իր անխափան աշխատանքը շարունակեց Քրիստոնէական Դաստիարակութեան Կեդրոնը, ուր եղան հոգեւոր սեմինարներ, միջ-եկեղեցական, միջ-համայնքային, միջ- քոյր եկեղեցիներու հանդիպումներ, հաւատքի ու դաւանական հարցերու քննարկումներ, յաճախակի եղան Եւրոպայէն հիւրերու այցելութիւններ: Պատերազմի ամբողջ ընթացքին, հաւատացեալներով օրըստօրէ առաւել յորդող սրահին մեջ, շաբաթական դրութեամբ եղան հովուական դասեր եւ Աստուածաշունչի սերտողութիւններ, որոնք կը վարէ վերապատուելի Յարութիւն Սելիմեանը: Շարունակունեցան կիներու, «Պատանի ասպետներ»-ու, Քրիստոնէական Ջանից Երիտասարդականի պաշտամունքներն ու գործունէութիւնները, գործեց նաեւ Ամառնային Ս.Գրոց վարժարանը եւ առհասարակ եկեղեցւոյ բոլոր բաղադրիչները գործեցին անխափան:

Գ. Յարաբերական.- Պատերազմը արգելք չեղաւ ու ընդհակառակը՝ առաւել խթանեց Հայ Աւետարանական Եկեղեցւոյ Համայնքային Գործադիր Մարմինի ու մասնաւորաբար համայնքապետ վերապատուելի Յարութիւն Սելիմեանի

գործնական յարաբերությունները քոյր եկեղեցիներուն, միւս հայ համայնքներուն, պետական պաշտօնական մարմիններուն եւ Հայաստանի պետական մարմիններուն հետ:

Քոյր եկեղեցիներուն հետ եղան միասնական պաշտամունքներ, ժողովներ ու սեմինարներ եւ երկրին ու ժողովուրդին դիմագրաւած հարցերու քննարկումներ:

Հայ Առաքելական ու հայ Կաթողիկէ համայնքներուն հետ մշտական համագործակցութիւնը շարունակուեցաւ հոգեւոր, ազգային եւ մշակութային ծիրերէն ներս, իսկ պատերազմի շրջանին ազգին ճակատագիրը տնօրինելու կապուած բազմազան հարցերու քննարկումներ եղան, ուր աւետարանական համայնքի ներկայացուցիչ-համայնքապետը յաճախ հանդէս եկաւ վճռական կարծիքներով ու առաջարկներով:

Առաւել հարուստ ու բազմաբնոյթ են պետական մարմիններու հետ յարաբերությունները, ուր երկուստեք կան փոխայցելութիւններ՝ կրօնական, ազգային ու պետական նշանաւոր դէպքերու, սօսերու առիթներով: Թերթատելով Հայ Աւետարանական Բեթէլ եկեղեցւոյ տարեկան գործունէութեանց տեղեկագիրները՝ կը տեսնենք այն հետքոտ աշխատանքը, որ կը տանին համայնքն ու համայնքապետը՝ պետութեան առջեւ համայնքը՝ դպրոցն ու Եկեղեցին ներկայացնելու, անոնց առջեւ ծառայող հարցերուն ու դժուարութիւններուն լուծումի ճամբաներ որոնելու նպատակով: Տարուած աշխատանքը կը պսակուի միշտ յաջողութեամբ, եւ թէ՛ դպրոցը իր փայլուն յառաջընթացին ու յառաջդիմութեան համար, թէ՛ համայնքը իր հակատարիմ քաղաքացիի կեցուածքով եւ թէ՛ անձնապէս համայնքապետը կ'արժանանան պարգեւներու եւ գովասանքներու: Այս առումով ամենէն ակնառու ձեռքբերումը, որ ունեցաւ համայնքապետը՝ երկարատեւ ջանքերու շնորհիւ Հալէպի Համալսարանին մէջ հայագիտական ամպիոն բանալու իրողութիւնն էր: Բացման արարողութիւնը տեղի ունեցած էր 2008-ի յունիսին՝ բարեկամութիւն խորհրդանշող ծառատնկումով:

Ի վերջոյ, միանգամայն բնական ու անխուսափելի են համայնքին յարաբերությունները Հայաստանի Հանրապետութեան պաշտօնական մարմիններու, յատկապէս Հալէպի հիւպատոսարանի ու Սփիւռքի նախարարութեան հետ: Այդ յարաբերությունները առաւել խորացան յատկապէս 1993-էն սկսեալ, երբ աւետարանական համայնքի ղեկավարութիւնը որոշեց Հալէպի գոլէճին մասնաշէնքերէն մէկը տրամադրել իբրեւ հիւպատոսարանի շէնք: Այնուհետեւ, 2003-ին գործընթացը նորոգուեցաւ ու հաստատուեցաւ 10 տարուան պայմանաժամկետով: Տրուած ըլլալով, որ պատերազմի միջոցին հիւպատոսարանին շէնքը կ'իյնար վտանգուած գօտիին մէջ, զայն ժամանաւորապէս փոխադրեցին աւելի ապահով վայր

(«Վիլլաներ» թաղ.), իսկ 2013-ին պայմանաժամկետը երկարաձգուեցաւ մինչեւ 2025 թուական:

Հայ աւետարանական համայնքը յաճախ հիւրընկալած է հայրենի հիւրեր՝ պետական պաշտօնեաներ, գիտութեան ու արուեստի մարդիկ: Նոյնիսկ պատերազմի տարիներուն այդ երեւոյթը չդադրեցաւ: Համայնքապետը յաճախակի առիթներով կ'ընդունի ՀՀ հիւպատոսները, որոնք միշտ բարձր կը գնահատեն գաղութէն ներս համայնքին գործունէութիւնը:

Սոյն համառօտ տեղեկագիրը թերի պիտի ըլլար, եթէ երկու բառով անդրադարձ չըլլար այն անխոնջ ջանքերուն, որ այս ծանր տարիներուն տարաւ համայնքապետ վերապատուելի Սելիմեանը: Օր ու գիշեր իրարու խառնած՝ անսպառ եռանդով օժտուած, գիտելիքներով զինուած, մարդային յարաբերութիւններ մշակելու մէջ հմուտ ու իր հօտին նուիրեալ այս հովիւը ե՛ւ իր համայնքին հոգեւոր, վարչական, մշակութային, կրթական ու այլ բազմազան հարցերը կը կարգադրէ, հայ եւ օտար համայնքներու, կազմակերպութիւններու, միութիւններու, մարմիններու հետ իր պաշտօնական յարաբերութիւնները կը վարէ, այլ նաեւ յաճախակի կը ճամբորդէ, հանդիպումներ կ'ունենայ Եւրոպայի կարգ մը երկիրներու քոյր համայնքներու ղեկավարութեանց հետ, անոնց ուշադրութիւնը կը հրաւիրէ Սուրիոյ ու նաեւ հայութեան ծանր կացութեան, որուն շնորհիւ Սուրիոյ մէջ սանձազերծուած պատերազմի բնոյթի մասին խաթարուած տեղեկատուութեան թերիները կը շտկուին, Սուրիոյ մասին աւելի անաչառ ու առարկայական կարծիքներ կը կազմուին, միւս կողմէն՝ իր համայնքի կարիքները հոգալու համար նիւթական միջոցներ կը հայթաթուին:

Այս բոլորանուէր գործունէութեան ու Սուրիոյ անմեղ ժողովուրդին արդար դատը լայն շրջանակներու մէջ պաշտպանելու համար հոկտեմբեր ամսուան մէջ, Գերմանիոյ Տրէստըն քաղաքի քաղաքապետին ձեռամբ վերապատուելի Սելիմեանը արժանացաւ «Swords into Plowshare» խաղաղութեան մրցանակի, որ, վստահաբար, առաջինը չէր իր ստացած շքանշաններէն: